**Թեմատիկ պլանավորում, 5-րդ դասարան, թեմա 1՝ Նախասիրություններ, Հետաքրքրություններ**

| **Ժամկետներ/ ըստ ընթացիկ տարվա ժամանակացույցի** | **Դաս** | **Ժամաքանակ (14 ժամ)** | **Նպատակ** | **Թեմայի վերջնարդյունքներ** | **Չափորոշչային Վերջնարդյունքներ** |
|---|---|---|---|---|---|
| Ամիս, ամսաթիվ | **Դաս 1. Ներածություն** | **1 ժամ** | • Ներմուծել նախասիրությունների կարևորության գաղափարը | • **Լսել և հասկանալ** նախասիրությունների և հետաքրքրությունների մասին պարզ խոսքը | **ՕԼ5-ՔՍՄ-Մ.1** Պատասխանել տրված հարցերին՝ արտահայտելով և հիմնավորելով իր կարծիքը: **(Քննական և ստեղծարար միտք)** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիս, ամսաթիվ | **Դաս 2-3. ՌԻնկնդ րում** | **2 ժամ** | • Ընդլայնել նախասիրություններ/հոբբի թեմային բնորոշ բառերի, արտահայտությունների և կառույցների պաշարը | • **Լսել և հասկանալ** նախասիրությունների և հետաքրքրությունների մասին պարզ խոսքը (տեսանյութ, ձայնագրություն և այլն)<br><br>• Ամրապնդել թեմային առնչվող **բառապաշարն ու քերականական նյութը**: | **ՕԼ5 –Հ-ՌԻ.2** Հասկանալ դանդաղ ընթացող պարզ քննարկման հիմնական բովանդակությունը՝ ճանաչելով գործողության վայրը, ժամանակը, անունները և այլն:**(Հաղորդակցություն)** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիս, ամսաթիվ | **Դաս 4-5. Ընթերցանություն** | **2 ժամ** | • Ընդլայնել նախասիրություններ/հոբբի թեմային բնորոշ բառերի, արտահայտությունների և կառույցների պաշարը | • **Կարդալ և հասկանալ** հետաքրքրությունների/հոբբիների մասին պարզ տեքստը<br><br>• ամրապնդել թեմային առնչվող **քերականական նյութը** | **OL5-Հ-Ը.1** Հասկանալ ծանոթ թեմաների շրջանակում կազմված, հաճախ գործածվող բառապաշար ունեցող տեքստերը, առանձնացնել հիմնական գաղափարը: **(Հաղորդակցություն)**<br><br>**OL5-ՔՍՄ-Ա.2**<br><br>Ներկայացնել տեղեկությունը ծանոթ իրավիճակներում դերախաղի, երկխոսության, կարճ ելույթի միջոցով: **(Քննական և ստեղծարար միտք)**<br><br>**Ուղղախոսություն** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիս, ամսաթիվ | **Դաս 5-6. Բանավոր խոսք** | **2 ժամ** | • Զարգացնել նախասիրությունների, նախընտրելի զբաղմունքների մասին կարճ **կապակցված խոսք** կազմելու հմտություններ | • **Հանդես գալ** իր նախասիրությունների և հետաքրքրությունների մասին նախապես պատրաստած **կարճ խոսքով՝** բացատրելով, թե ինչն է իրեն դուր գալիս, ինչը՝ ոչ<br><br>• Պարզ արտահայտություններով **վարել շատ կարճ երկխոսություն** իր և իր ընկերների նախասիրությունների մասին | **ՕԼ5-Հ-Մ.5** Բացատրել, թե ինչն է իրեն դուր գալիս, ինչը՝ ոչ: **(Հաղորդակցություն)** **ՕԼ5-Հ-Փ.1** Պարզ արտահայտություններով վարել շատ կարճ երկխոսություն ծանոթ թեմաների շուրջ (նախասիրություններ, աշխատանք, մասնագիտություն, ուղևորություններ, ընտանի և վայրի կենդանիներ) զրուցակցի օգնությամբ, անգամ եթե լիարժեք չի հասկանում զրուցակցին: **(Հաղորդակցություն)** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիս, ամսաթիվ | **Դաս 7-8. Գրավոր խոսք** | **2 ժամ** | • Զարգացնել նախասիրությունների, նախընտրելի զբաղմունքների մասին կարճ կապակցված խոսք կազմելու հմտություններ | • Պարզ խոսքային կառույցներով գրավոր նկարագրել սեփական նախասիրությունները և առօրյան<br>• Ամրապնդել թեմային առնչվող բառապաշարը և տրված քերականական նյութը: | **ՕԼ5-Հ-Գ.2** Կազմել կարճ, պարզ գրավոր տեղեկություն (մինչև 70 բառ)՝ նկարագրելով դեպքերի ընթացքը (ի՞նչ, ե՞րբ, որտե՞ղ) և գործածելով համապատասխան բառապաշար: **(Հաղորդակցություն)**<br>Ուղղագրություն |
| Ամիս, ամսաթիվ | **Դաս 9-10. Կրկնություն, ամրապնդում** | **2 ժամ** | • Ձևավորել վերաբերմունք ազատ ժամանակը ճիշտ տնօրինելու և նախընտրած գործով զբաղվելու հանդեպ | • Եզրահանգումներ անել ազատ ժամանակը ճիշտ տնօրինելու և նախընտրած գործով զբաղվելու շուրջ<br>• **Ամփոփել** թեմային առնչվող բառապաշարը, քերականական նյութը, ազատ ժամանակը ճիշտ և արդյունավետ տնօրինելու ձևերը: | **ՕԼ5-Ի-Ը.1** Կարևորել ընտանեկան ժամանցը՝ օրվա ընթացքում ընտանիքի հետ անցկացնելով իր ժամանակի մի մասը: **(Ինքնություն)** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Ամիս, ամսաթիվ | **Դաս 11-12. Անդրադարձ** | **2 ժամ** | • Կատարել անդրադարձ ձեռք բերված գիտելիքների, կարողությունների, վերաբերմունքային արժեքների վերաբերյալ: | • **Ներկայացնել** թեմայի շրջանակում ձեռք բերված գիտելիքները կարճ առաջադրանք՝ նախագծերի միջոցով (առաջարկվող գործունեության ձևեր) | **ՕԼ5-Ի-Ա.1** Ճանաչել իր հույզերն ու զգացողությունները՝ արտահայտելով դրանք: **(Ինքնություն)** |
| Ամիս, ամսաթիվ | **Դաս 13-14. Թեմատիկ ամփոփիչ աշխատանք** | **2 ժամ** | • Չափել աշակերտի ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքների, հասկացությունների ընկալման, կարողությունների կիրառման մակարդակը: | • Պատրաստել և ներկայացնել պաստառ նախասիրությունների/հետաքրքրությունների վերաբերյալ՝ օգտագործելով թեմային բնորոշ բառապաշարը, քերականական նյութը, և ազատ ժամանակը ճիշտ տնօրինելու գաղափարը:<br>• Կարդալ և հասկանալ նախասիրությունների և հետաքրքրությունների վերաբերյալ տեքստը: | **Ձևավորող/ միավորային գնահատում** |